Հայաստան

Հունվար - մարտ, 2022 թվական

Այն բանից հետո, երբ 2021 թ. վերջում ավարտին հասավ Հայաստանի Միջգործակալական արձագանքման ծրագիրը, ՄԱԿ ՓԳՀ-ն ստեղծեց **Իրավական պաշտպանության եւ լուծումների խորհրդատվական հարթակ**, որի նպատակն է՝ ուղղորդել ու համակարգել մարդասիրական ոլորտի դերակատարների եւ պետական կառույցների՝ ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց պաշտպանության հետ կապված գործողությունները:

ՄԱԿ ՓԳՀԳ-ն մեկնարկել է **Վաղ ահազանգման համակարգ** (ՎԱՀ)՝ որպես սահմանային մարզերում իրավիճակի մշտադիտարկման նոր նախաձեռնություն: ՎԱՀ-ը հնարավորություն կտա ժամանակին ստանալ տեղեկություններ իրավական պաշտպանության ռիսկերի եւ մտահոգությունների մասին եւ կօգնի ՄԱԿ ՓԳՀ-ին եւ գործընկերներին՝ ժամանակին եւ արդյունավետորեն արձագանքել առկա խնդիրներին:

ՄԱԿ ՓԳՀ-ն մեկնարկել է **Իրավական պաշտպանության մշտադիտարկման** նոր նախաձեռնություն՝ բնակչության՝ մտահոգության ներքո գտնվող բոլոր խմբերի համար: Այն ավելի որակյալ հիմք կհանդիսանա այդ անձանց կարիքներին արձագանքման համար, այդ թվում՝ Ուկրաինայից տեղահանված քաղաքացիների, որոնք վերջերս դիմել են Հայաստանում ապաստան ստանալու համար:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

573 անձ

կապ է հաստատել ՄԱԿ ՓԳՀ օգնության թեժ գծի հետ, որը գործարկվել է ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից: Հեռախոսազանգերի շուրջ 57%-ը ստացվել է փախստականի իրավիճակում գտնվող անձանցից. դրանց 98%-ն առնչվել է մարդասիրական օգնության ստացմանը:

3513 տեղահանված անձի

տրամադրվել են սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ խորհրդատվություն եւ դեպքերի կառավարում՝ ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

122 տեղահանված անձ

մասնակցել է ՄԱԿ ՓԳՀ գործընկերոջ՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացված խմբային հոգեբանական սեսիաների:

«Բերդի կանանց ռեսուրս կենտրոն» հիմնադրամը տեղահանված կանանց ներգրավել է սոցիալական ձեռնարկատիրության մեջ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի՝ հյուրընկալող համայնքներում կարողությունների զարգացման գործողությունների շնորհիվ, Բերդ, Տավուշի մարզ © UNHCR/Արեգ Բալայան

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (2022 Թ. ՄԱՐՏԻ 29-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ֆինանսական պահանջներ

12.7 մլն ԱՄՆ դոլար



Ֆինանսավորված մաս՝ 4%

552,747 ԱՄՆ

Պակասող ֆինանսավորում՝ 96%

12.1 մլն ԱՄՆ դոլար

ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ* 2022 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



Աղբյուրը. ՄԱԿ ՓԳՀ Տարեկան վիճակագրական զեկույց, 2022 թ. փետրվար

Գործառնական համատեքստ

ՄԱԿ ՓԳՀ ծրագրված գործողությունները 2022 թվականի համար

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է իր նպաստը բերել փախստականներին վերաբերող համապարփակ օրենսդրության մշակմանը, շահերի պաշտպանության գործողություններին, ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց հետ աշխատող Միգրացիոն ծառայության, սահմանապահների, դատական համակարգի և Հանրային պաշտպանի գրասենյակի իրավաբանների կարողությունների զարգացմանը: Ի լրումն, ՄԱԿ ՓԳՀ-ն նախատեսում է տեխնիկական աջակցություն ցուցաբերել Աբովյան քաղաքում կառուցվող Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնին, ինչպես նաև մշակել հեռակա ուսուցման ծրագիր Սահմանապահ ծառայության անձնակազմի համար, ներառյալ՝ համապատասխան համակարգչային սարքավորումների տրամադրումը:

ՄԱԿ-ի ՓԳՀ-ն, իր գործընկերների հետ համատեղ, աջակցում է խաղաղ համակեցության 12 նախագծերի և համայնքահեն կազմակերպությունների ներկայացրած 10 նախագծերի, որոնց նպատակն է տնտեսական ինտեգրման խթանման և հյուրընկալող համայնքներում խաղաղ համակեցության պահպանման նպատակով միջոցների և համայնքային համախմբման առաջմղումը: Հատուկ ուշադրություն է դարձվում տեղահանված անձանց մոտիվացմանը և հասարակության կյանքում նրանց ներգրավմանը, որպեսզի նրանք իրենց նպաստը կարողանան բերել հյուրընկալող համայնքներ:

Տեղահանված անձանց բարեկեցության և հիմնական կարիքների բավարարման նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է տրամադրել դեպքերի կառավարման և մասնագիտացված ծառայություններ՝ հիմնված իրավական պաշտպանության մշտադիտարկման և օգնության թեժ գծի գործարկման արդյունքների վրա: Կենսապահովման ծրագրերի, ինչպես նաև մասնագիտական դասընթացների և հայոց լեզվի դասընթացների հասանելիության ապահովման հետ մեկտեղ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է դրամական աջակցություն ցուցաբերել առավել խոցելի տեղահանված անձանց: Կարևոր գործողություն է լինելու նաև երեխաների պաշտպանության կարիքների վերհանման և գենդերահեն բռնության զոհերի վաղ հայտնաբերման ու արձագանքման համապատասխան գործողությունների կազմակերպման թեմաներով գործընկեր կազմակերպությունների կարողությունների զարգացումը:

Տեղահանված կինը ստացել է խոհանոցային տեխնիկա՝ ՄԱԿ ՓԳՀ-ի՝ եկամտի ստեղծման գործիքների տրամադրման ծրագրի միջոցով, Դեբեդ, Լոռու մարզ:
© UNHCR/Արեգ Բալայան

Ձեռքբերումներ. 2022 թ. հունվար-մարտ

697 տեղահանված անձի տրամադրվել են առողջապահական ծառայություններ ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

412 տեղահանված անձինք բժշկական օգնություն են ստացել «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

191 տեղահանված անձինք ստացել են իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

16 տեղահանված երեխաների տրամադրվել է դեպքերի մասնագիտացված կառավարում ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:

25 տարեցների և հատուկ կարիքներ ունեցող անձանց ցուցաբերվել է օժանդակություն Հայկական Կարմիր խաչի ընկերության և «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի կողմից:

77 տեղահանված անձ մասնակցել է Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված տնտեսական ինտեգրման տեղեկատվական հավաքների, իսկ 19 տեղահանված անձ՝ ընդհանուր բնույթի տեղեկատվական հավաքների:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության Միգրացիոն ծառայության խնդրանքով՝ 2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը՝ Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և 2021 թ. գործողությունների ծրագիրն իրականացնելու գործում: Այս աջակցության շրջանակում ՄԱԿ ՓԳՀ-ն 2022 թ. առաջին եռամսյակում ֆինանսավորել է **Հայաստանի ապաստանի համակարգում առկա կարողությունների բացերի և կարիքների համապարփակ գնահատում**: Գնահատումը կծառայի որպես փաստական հիմք՝ միգրացիոն հոսքերի կառավարման ազգային ծրագրի մշակման համար, որը պետք է մեկնարկի ընթացիկ տարում:
- **Կարողությունների զարգացում.** նոր հավաքագրված 28 սահմանապահներ օգտվել են 2022 թ. փետրվարի 24-ին «Փախստականների մասին» օրենքի թեմայով վերապատրաստման դասընթացից:

ԱՊԱՍՏԱՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

- Կարիքների գնահատման հիման վրա՝ հաշվետու ժամանակահատվածում ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն դրամական օգնություն է տրամադրել **75 տեղահանված տնային տնտեսությունների՝** վարձակալության ծախսերը հոգալու համար:
- Մոտ **27 տնային տնտեսություն** օգտվել է ոչ դրամական օժանդակությունից (ներառյալ՝ հագուստ և հիգիենայի պարագաներ):

Գործընկերային աշխատանք

- ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը, ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ միասին, համագործակցում է պետական և ոչ պետական շահակից մարմինների հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն անդամակցում է ՄԱԿ-ի միջգործակալական համակարգման մի շարք հարթակների ու մեխանիզմների: ՄԱԿ-ի երկրի հավաքականի հետ համատեղ՝ այն խթանում է Հայաստանում «Կայուն զարգացման օրակարգ 2030»-ի կենսագործման աշխատանքները՝ 2021-2025 թթ. ՄԱԿ-ի Կայուն զարգացման համագործակցության շրջանակի միջոցով:
- Իր կորպորատիվ գործընկերոջ՝ գլոբալ մարքեթինգային MADE51 գործակալության, ինչպես նաև WFTO-ին անդամակցող HDIF-ի միջոցով ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակը տեղահանված սիրիացի արհեստավորներին ներգրավում է ավանդական արհեստագործական արտադրության մեջ՝ նպաստելու նրանց կենսապայմանների և ինքնապավինման բարելավմանը:
- ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է աջակցել ՈՒԵՖԱ-ի կողմից ֆինանսավորվող «Ինտեգրում ֆուտբոլի միջոցով» համայնքային ծրագրին, որը նախատեսված է տեղահանված ու տեղացի երեխաների համար և վեց հյուրընկալ համայնքներում իրականացվում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) կողմից: ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը և ՀՖՖ-ն իրականացնում են մշտադիտարկման համատեղ այցելություններ՝ դիտարկելու ծրագրի առաջընթացը և գնահատելու դրա ներգործությունը:

Ֆինանսական տեղեկություններ

2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը փորձում է 12.7 միլիոն ԱՄՆ դոլար հայթայթել՝ փախստականի իրավիճակում գտնվող անձանց կարիքների բավարարման և իր տարեկան ծրագրի ծախսերը հոգալու նպատակով:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է Եվրամիությանը՝ 2022 թվականին Հայաստանում իրականացվող իր ծրագրերին աջակցելու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև շնորհակալություն է հայտնում հետևյալ դոնոր կառույցներին, որոնք 2022 գլոբալ ծրագրերին առանց նախապայմանների հատկացրել են ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դոլար.

Շվեդիա | Նորվեգիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | Դանիա | Գերմանիա | Շվեյցարիա | մասնավոր դոնորներ – Իսպանիա | Բելգիա | Իռլանդիա
Ալժիր | Հայաստան | Բուլղարիա | Կանադա | Էստոնիա | Ֆինլանդիա | Իսլանդիա | Լիխտենշտեյն | Լիտվա | Լյուքսեմբուրգ | Մոնակո | Չեռնոգորիա | Պերու | Քաթար | Կորեայի Հանրապետություն | Սաուդյան Արաբիա | Սինգապուր | Թաիլանդ | Թուրքիա | Ուրուգվայ | մասնավոր դոնորներ

Առանց նախապայմանների հատկացված միջոցները որևէ սահմանափակմամբ չկաշկանդված այն գումարներն են, որոնց շնորհիվ ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն է ստանում ճկուն կերպով օժանդակելու մտահոգության ներքո գտնվող՝ ծայրահեղ կարիքավոր և վտանգված բնակչությանը:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, Ռասել Ֆրեյզեր, արտաքին կապերի համակարգող, fraser@unhcr.org